

**«ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՓՈԽՃԱՆԱԶՄԱՆ և ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԱՓՇԱՏԿ)**

**Հոգաբարձուների խորհրդի 30-րդ նիստ
Օրակարգ**

26 հունվարի 2018թ.

Վայրը: Կրթության և գիտության նախարարություն ժ. 15:00

1. 2017թ. գործունեության տարեկան հաշվետվությունը
2. 2017թ. ծախսերի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը
3. 2018թ. ծրագրայի ծախսերի տարեկան նախահաշվի հաստատում
4. Այլ հարցեր

Հաստատված է
«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության
ազգային տեղեկատվական կենտրոն» հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի նախագահի՝
Նարի Հարությունյան



26 հունվարի 2018թ.

2017 թվականի
Տարեկան Հաշվետվություն

ԱՓՇԱՏԿ-ը 2017 թվականին. հիմնական ձեռքբերումները, դրանց սահմանները և մարտահրավերները

Հետադարձ հայացք գցելով անցած տարվա վրա՝ վստահաբեր կարելի է պնդել, որ ԱՓՇԱՏԿ-ի համար այն շատ լավն էր: Թերևս ոչ ճիշտ այն իմաստով, ինչ Ֆրանկ Սինատրայի “It was a very good year” հանրահայտ երգում, բայց իմ կարծիքով, կենտրոնը իսկապես առաջընթաց է արձանագրել մի շարք ուղղություններով:


Ակնհայտ ձեռքբերում էին երկու միջազգային համաժողովները, որոնցից մեկը նվիրված էր փախստականների որակավորումների ճանաչմանը, իսկ մյուսը՝ կրթության մեջ կեղծարարության երևույթներին: Ըստ մասնակիցների գնահատականի երկու միջոցառումները նորարական էին բովանդակային առումով, ինչպես նաև համահունչ էին կրթության ոլորտի հիմնական խնդիրներին: Ավելին, ԱՓՇԱՏԿ-ը ակտիվորեն մասնակցեց բուհերի համար Եվրախորհրդի կողմից կազմակերպված քառօրյա վերապատրաստումներին, որոնք նվիրված էին որակավորումների ճանաչման, կրթական ծրագրերի մշակման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացում թափանցիկություն և հաշվետվողականության ընդլայնման գործիքակազմին: Համագործակցությունը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կառույցների և գործընկերների հետ ավելի ամրապնդեց, գրանցելով զգալի ձեռքբերումներ գործունեության հիմնական ուղղություններով: Ընդհանուր առմամբ ԱՓՇԱՏԿ-ը, անշուշտ, իր գործունեությունը ծավալում է ազգային և եվրոպական բարձրագույն կրթության ռազմավարական զարգացումների համատեքստում:

1. Տեղեկատվության տրամադրում տեղական և արտասահմանյան գործընկերներին

2017թ-ի ընթացքում ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է իր հիմնական գործառույթների իրականացումը՝ տրամադրելով տեղեկատվություն ազգային և օտարերկրյա կրթական համակարգերի, նրանցում շնորհիվող որակավորումների, որակավորումների ազգային շրջանակների, փախստականների որակավորումների ճանաչման, կրթության միջազգայնացման և շարժունության, կեղծարարության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Կենտրոնի գործընկերների և շահառուների շրջանակը համալրում են ինչպես տեղական և արտասահմանյան կառույցները, այնպես էլ անհատները:


Համագործակցելով տեղական կառույցների հետ՝ ԱՓՇԱՏԿ-ը հիմնականում տրամադրել է տեղեկատվություն օտարերկրյա կրթական համակարգերի և դրանցում շնորհիվող որակավորումների վերաբերյալ: Ստորև ներկայացված Պատկեր 1-ում արտացոլված է տեղական կառույցներին օտարերկրյա որակավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվությունը՝ տոկոսային հարաբերակցությամբ: Պատկերից ակնհայտ է դառնում, որ կենտրոն ներկայացված օտարերկրյա որակավորումների զգալի մասը կազմում են ռուսական որակավորումները (24%): Համեմատաբար շատ է նաև ԱՄՆ-ից (9%), Գերմանիայից (8%), Ուկրաինայից (7%) և Սիրիայից (5%) ստացված որակավորումների թիվը:

Պատկեր 1: Օտարերկրյա որակավորումների աշխարհագրությունը



Արտասահմանյան կազմակերպությունների և միջազգային կառույցների հետ համագործակցության արդյունքում ԱՓՇԱՏԿ-ը տրամադրել է տեղեկատվություն ազգային կրթական համակարգի, ուսումնական հաստատությունների, նրանց կողմից շնորհվող որակավորումների, դրանց իսկության, ակադեմիական և մասնագիտական իրավունքների, ինչպես նաև երկրում գործող գնահատման համակարգերի վերաբերյալ: Միջազգային համագործակցության շրջանակը ընդգրկում է ENIC-NARIC ցանցը, Համաշխարհային կրթական ծառայությունները (World Education Services), Կրթության հետազոտությունների միջազգային հիմնադրամը (International Education Research Foundation), օտարերկրյա միգրացիոն ծառայությունները, Իսրայելի առողջապահության նախարարությունը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները և այլն: Պատկեր 2-ում ներկայացված է ազգային որակավորումների իսկության և դրանց ակադեմիական ու մասնագիտական իրավունքների վերաբերյալ տրամադրված խորհրդատվության վիճակագրությունը:

Պատկեր 2: ՀՀ որակավորումների վերաբերյալ տրամադրված տեղեկատվություն



Ինչպես երևում է պատկերից հարցումների 42% ստացված են Վրաստանից: Գերակշռում են նաև ԱՄՆ-ից (10%), Գերմանիայից (9%), Շվեդիայից (5%) և Ռուսաստանից (5%) ստացված հարցումները: Հաշվետու տարվա համար հատկանշական է Իսրայելի առողջապահության

նախարարության կողմից ստացված հարցումների քանակը, որը կազմել է ընդհանուր հարցումների 8% և վերաբերում է Հայաստանում ձեռք բերված բժշկական որակավորումներին:

Կենտրոնը ակտիվորեն մասնակցել է նաև ENIC-NARIC ցանցում ընթացող մի շարք քննարկումներին, հարցումներին և ուսումնասիրություններին: Մասնավորապես անցած տարում արձարծվել են հետևյալ թեմաները՝

- ✦ տեղեկանքների տրամադրման համար գանձվող գումարների չափը անդամ երկրների կողմից,
- ✦ դոկտորական աստիճաններ և դրանց տեսակները, կրեդիտների շնորհումը, ճանաչման առանձնահատկությունները,
- ✦ տրանսազգային որակավորումների ճանաչումը,
- ✦ փախստականների որակավորումների ճանաչման ազգային մոտեցումները,
- ✦ միջազգային կազմակերպությունների կողմից շնորհված որակավորումների ճանաչումը և այլն:

2. Օտարերկրյա որակավորումների գնահատում, խորհրդատվական տեղեկանքի տրամադրում

Տեղեկանքները տրամադրվում են հայկական և օտարերկրյա որակավորումներ ունեցող անհատներին՝ ակադեմիական և/կամ աշխատանքային շարժունությունը խթանելու նպատակով: Խորհրդատվական տեղեկանքների զգալի մասը վերաբերում է նաև կանոնակարգվող մասնագիտություններին և այդ մասնագիտություններով աշխատելու պահանջներին:

2017թ. ի ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն նախորդ տարիների՝ հաշվետու տարվա ընթացքում զգալի աճել է կենտրոնի կողմից տրամադրվող խորհրդատվական տեղեկանքների քանակը՝ կազմելով ընդունված դիմումների ընդհանուր քանակի 28%: Ի համեմատություն, նշենք, որ 2016թ ին այն կազմել է 12%: Տեղեկատվության տրամադրումն ըստ շահառուների, ներկայացված է Պատկեր 3 ում, որը ցույց է տալիս, որ կենտրոնի 2017թ-ի աշխատանքների մեծ մասը բաժին է ընկել արտասահմանյան (42%) և տեղական (30 %) կառույցների հետ համագործակցությանը:

Պատկեր 3. Տեղեկատվության տրամադրում ըստ շահառուների



Պատկեր 4-ում բերված է ազգային ու օտարերկրյա որակավորումների վերաբերյալ տրամադրված խորհրդատվական տեղեկանքների հարաբերությունը, որը գրեթե հավասար է: 2017թ.-ի ընթացում տրված խորհրդատվական տեղեկանքների 51% վերաբերում են օտարերկրյա որակավորում ունեցող քաղաքացիներին, իսկ 49%՝ հայկական որակավորումներին:

Պատկեր 4. Տրամադրված տեղեկանքներն ըստ ազգային և օտարերկրյա որակավորումների



2017թ.-ին ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է համագործակցել ԱՄՆ հյուպատոսության հետ՝ տրամադրելով անգլերեն լեզվով խորհրդատվական տեղեկանքներ այն ՀՀ քաղաքացիներին, ովքեր մեկնում են ԱՄՆ մշտական բնակության: Հյուպատոսության աշխատակիցների մոտ բազմաթիվ հարցեր են ծագում հատկապես միջին մասնագիտական որակավորումների, հին ու նոր մասնագիտությունների վերաբերյալ:

Որակավորումների գնահատման (ճանաչման) տեղեկանք տրվում է այն քաղաքացիներին, որոնք դիմում են կրթությունը շարունակելու Հայաստանում՝ դոկտորանտուրայում (Ph.D) օտարերկրյա որակավորումներով: Այսօրի դեպքերի թիվը տարեց տարի նվազում է և 2017թվ ին կենտրոնը տրամադրել է որակավորման գնահատման 3 տեղեկանք: ՀՀ բուհերի և գիտահետազոտական ինստիտուտների համար դա լուրջ մարտահրավեր է գիտահետազոտական կարողությունների հզորացման առումով:

Հիմնական վիճակագրական տվյալներ

Ամփոփելով 2017թ.-ի ընթացքում կատարված աշխատանքները՝ կարելի է արձանագրել հետևյալ ցուցանիշները.

- ✚ տրամադրված խորհրդատվության ընդհանուր քանակը փոքր ինչ նվազել է՝ կազմելով 1197 գործ՝ նախորդ տարվա 1213-ի համեմատությամբ: Տրամադրված խորհրդատվության 70 % բաժին է ընկնում գրավոր հարցումներին:
- ✚ ընդ որում տրամադրված խորհրդատվական տեղեկանքների քանակը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 38%-ով՝ կազմելով 201 գործ,
- ✚ գնահատվել և ճանաչման որոշում է կայացվել օտարերկրյա որակավորումների 3 դեպքում,
- ✚ տրամադրվել է 994 տեղեկատվություն տեղական և միջազգային շահառուներին, որի հիմնական մասը շարունակում է կազմել Վրաստանին տրամադրված տեղեկատվությունը,
- ✚ բացահայտվել են կրթական փաստաթղթերի կեղծման 8 դեպք (որից 4-ը տրամադրվել էին ՀՀ-ում, 4-ը՝ Ռուսաստանի Դաշնությունում): Դրանց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարությանը:

3. Միջազգային համատեղ ծրագրերի իրականացում

2017 թվականին ԱՓՇԱՏԿ-ը ակտիվորեն մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի և դրանց շրջանակներում իրականացվող միջոցառումներին՝ ներկայացնելով ազգային փորձառությունը: Եվրոպական ծրագրերում կենտրոնի մասնակցությունը թույլ է տալիս ամրապնդել նրա դիրքը միջազգային ասպարեզում, և խթանում է տեղական կառույցների հետ աշխատանքը:

«Գործիքակազմ փախստականների և տեղահանված անձանց բարձրագույն կրթության ճանաչման համար» /"Toolkit for recognition of foreign higher education for refugees, displaced persons and persons in refugee-like situation"». Erasmus+ www.nokut.no

«Գործիքակազմ փախստականների և տեղահանված անձանց բարձրագույն կրթության ճանաչման համար» ծրագրի նպատակն է խթանել փախստականների որակավորումների ճանաչումը հետագա կրթության և/կամ աշխատանքի անցնելու նպատակով, այն դեպքերում, երբ կրթական փաստաթղթերը իսպառ բացակայում են, կամ միայն մասամբ են առկա: Ծրագրին իրականացվում է Նորվեգիայի (NOKUT), Մեծ Բրիտանիայի (UK NARIC), Ֆրանսիայի (CIEP), Նիդեռլանդների (NUFFIC), Իտալիայի (CIMEA), և Հայաստանից (ArmENIC) ազգային տեղեկատվական կենտրոնների կողմից:

Վերջին տարիներին Եվրոպայում փախստականների հետ կապված ճգնաժամը հատկապես է կարևորել ծրագիրը: ԱՓՇԱՏԿ-ի մասնակցությունը ծրագրին հատկանշական է՝ հաշվի առնելով Սիրիայից փախստականների մեծ ներհոսքը դեպի Հայաստան:

2017թ.-ի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- մշակվել են հինգ երկրների կրթական համակարգերի նկարագրերը,
- մշակվել է ճանաչման ընդհանուր մեթոդաբանությունը և դրա գործիքակազմը,
- իրականացվել են փախստականների որակավորումների ճանաչման գործիքակազմի, այդ թում նաև Փախստականների որակավորումների անձնագրերի՝ մեթոդաբանության փորձարկումը:

Նշված աշխատանքներին մասնակցել է նաև ԱՓՇԱՏԿ-ը. ավելին, կենտրոնը սեփական նախաձեռնությամբ մշակել է փախստականների ճանաչման համար մի ձեռնարկ, որը նախատեսված է բուհերի համար (Հավելված 1): Ձեռնարկում ներառվել են հայերենի թարգմանված ու ադապտացված մեթոդաբանությունը, գործիքակազմը և Սիրիայի բարձրագույն կրթական համակարգի նկարագիրը: Օգտագործելով ձեռնարկում ներկայացված փաստաթղթերի օրինակները՝ բուհերը կարող են ինքնուրույն իրականացնել փախստականների որակավորումների ճանաչում:

2017թ.-ի հոկտեմբեր ամսին կենտրոնի կողմից իրականացվեցին նաև երկու միջոցառումները, որոնք կարևոր են սիրիահայերի հետագա ինտեգրումը Հայաստանում խթանելու համար:

1. 2017թ.ի հոկտեմբերի 2-ին Երևանում ԱՓՇԱՏԿ-ի ու NOKUT-ի գնահատման մասնագետների կողմից իրականացվեց փախստականների որակավորման անձնագրի փորձարկումը՝ նախապես մշակված մեթոդաբանության հիման վրա: Փորձարկմանը համար ընտրվել էին չորս սիրիահայ փախստականներ, որոնք իրենց կրթության ճանաչման համար դիմել էին կենտրոն, սակայն պահանջվող փաստաթղթերի մի մասը առկա չէր: Նրանց առաջարկվել էր մասնակցել փորձարկմանը և տրամադրվել էր անհրաժեշտ տեղեկատվությունը տվյալ մեթոդաբանության վերաբերյալ: Փորձարկման ավարտին չորս սիրիահայերից միայն երկուսին տրվեց փախստականի որակավորման անձնագիր (Հավելված 2): Մյուս երկու փախստականները հարցազրույցի ժամանակ չկարողացան ներկայացնել բավարար ապացույցներ հաստատող իրենց ստացած որակավորումը:
2. Փախստականների որակավորման անձնագրի մեթոդաբանության փորձարկմանը հաջորդեց «Փախստականները և որակավորումների ճանաչումը» թեմայով սեմինարը, որը տեղի ունեցավ 2017թ.-ի հոկտեմբերի 3-ին: Սեմինարի նպատակն էր ներկայացնել փախստականների

¹ Փախստականների որակավորման անձնագիրը փաստաթուղթ է բարձրագույն կրթության գնահատման վերաբերյալ, որը տրվում է ներկայացված կրթական փաստաթղթերի ու համակարգված հարցազրույցի հիման վրա: Որակավորման անձնագիրը նախատեսված է այն անձանց (փախստականների) համար, ովքեր չեն կարող փաստաթղթերով լիովին փաստել իրենց ստացած կրթությունը և որակավորումը: Անձնագիրը տեղեկություն է տրամադրում անձի ստացած կրթության, աշխատանքային փորձի և լեզվական իմացության վերաբերյալ և միտված է խթանելու փախստականների ինտեգրումը հասարակության մեջ՝ մասնավորապես կրթությունը շարունակելու և աշխատանքի անցնելու համար: Փաստաթուղթը ունի տեղափոխելի է և կարող է օգտագործվել փախստականների կողմից մի այլ եվրոպական երկրում:

որակավորման ճանաչման ներկա մարտահրավերները և դրանց հաղթահարման արդի մոտեցումները: Սեմինարը իրականացվել է ԱՓՇԱՏԿ-ի և NOKUT-ի աշխատակիցների կողմից, որին մասնակցել են նաև ներկայացուցիչներ ՀՀ Կրթության և գիտության, Սփյուռքի նախարարություններից, բուհերից, գործատուների միությունից, Հայաստանում գործող միջազգային կառույցներից և սիրիահայերի հարցերը համակարգող կազմակերպություններից: Հանդիպման ընթացքում ներկայացվեց նաև «Փախստականները և ճանաչումը» ծրագրի շրջանակներում մշակված գործիքակազմը, և տեղի ունեցավ փախստականների որակավորման անձնագրի պաշտոնական հանձնումը՝ փորձարկումը հաջողությամբ անցած երկու սիրիահայերին:

«ԱՐՄԵՆ-ՔԱ - Հայաստանում ազգային և սեկտորիալ որակավորումների շրջանակի իրագործում»/ “Implementation of national and sectorial qualifications frameworks in Armenia”
Tempus , www.armenqa.am

2017թ.-ի մայիսին Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ ծրագրի ավարտական համաժողովը, որի նպատակն էր կրթության շահառուներին ներկայացնել հիմնական արդյունքները և դրանց կարևորությունը բարձրագույն կրթության արդի զարգացումների համատեքստում, որոնք ամրագրված են 2015թ. Երևանի կոմյունիկեում: ԱՓՇԱՏԿ-ը համաժողովի ժամանակ ներկայացրեց ՀՀ ՈԱԾ-ը, որպես որակավորումների ճանաչումը խթանող գործիք, հատկապես երբ այն համադրելի է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (QF-EHEA) և Եվրոպական (EQF) ՈՇ-ներին: Նշվեց նաև ազգային մակարդակում առկա մարտահրավերները որակավորումների գնահատման և տեղեկատվության թափանցիկ ընթացակարգերի առումով:

«ՍՔԱՆ-Դ2» Ազգային ակադեմիական դիպլոմների նմուշներ և պատճեններ/
“SCAN-D2- Samples and Copies of Academic National Diplomas 2”, Erasmus+
<https://scand.cimea.it/>:

2017թ.-ի սեպտեմբերին ավարտվեց «ՍՔԱՆ-Դ2» «Ազգային ակադեմիական դիպլոմների նմուշներ և պատճեններ» ծրագիրը: Ծրագրի արդյունքում ստեղծվել է տվյալների էլեկտրոնային բազա, որում հավաքագրված են Եվրոպական 24 երկրների և դրանց բուհերի կողմից շնորհվող որակավորումների ձևանմուշները և դրանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Ծրագրի 1-ին փուլին մասնակցում էին 14, իսկ 2-րդ փուլին՝ 10 երկրներ: Հայաստանի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է 103 ձևանմուշներ՝ իրենց մանրամասն նկարագրությամբ: Ներկայումս տվյալ համակարգը հասանելի է միայն ENIC NARIC ների համար: Հնարավոր է, որ մոտ ապագայում համակարգից կկարողանան օգտվել նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները:

«ԻՍՈՔԱՔ - Մինչ Բոլոնիայի ակադեմիական որակավորումների տեղեկատվական համակարգ»/“ISOBAQ- Information System of Pre-Bologna Academic Qualifications”, Erasmus+,

«Մինչ Բոլոնիայի ակադեմիական որակավորումների տեղեկատվական համակարգ» ծրագիրը իր տեսակով նման է «ՍՔԱՆ-Դ2»-ին: Այս ծրագրի նպատակն է ստեղծել միասնական էլեկտրոնային համակարգ, որտեղ հավաքագրված կլինեն Բոլոնիայի գործընթացից առաջ շնորհվող որակավորումների ձևանմուշները և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը: Համակարգում տեղադրվելու է նաև յուրաքանչյուր երկրում Բոլոնիայի գործընթացից առաջ գործող կրթական համակարգի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ճանաչված բուհերի ցանկը: Ծրագիրն իրականացվում է Բուլղարիայի Ակադեմիական ճանաչման և շարժունության ազգային կենտրոնի (NACID) կողմից: Ծրագրում ներառված են 8 երկիր: ԱՓՇԱՏԿ-ը հավաքագրել է ՀՀ-ում մինչև Բոլոնիայի գործընթացի ներդրումը շնորհվող մոտ 30 որակավորումներ: «ԻՍՈՔԱՔ»-ը ինչպես նաև «ՍՔԱՆ-Դ2» տեղեկատվական համակարգը նախատեսված է ENIC-NARIC գրասենյակների համար՝ նպատակ ունենալով ճանաչման գործընթացը դարձնել ավելի արագ և թափանցիկ:

«ԲՈՒՍԹ»- Հայկական համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարքեթինգի խթանում/“Boosting Armenian Universities Internationalization Strategy & Marketing /BOOST, Erasmus+”

Էրազմուս+ ծրագրի շրջանակում իրականացվող ևս մեկ ծրագիր, որի նպատակն է ազգային և ինտերնացիոնալ քաղաքականության շրջանակի զարգացմամբ խթանել բուհերի միջազգայնացումը: ԱՓՇԱՏԿ-ը ներգրավված է երկու աշխատանքային խմբում՝ միջազգայնացման ազգային ռազմավարության մշակման և որակի ապահովման: 2017թ.-ի հունիսին տեղի ունեցավ ծրագրի շրջանակներում առաջին ուսումնական այցը Շվեդիայի Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտ: Ուսումնական այցի նպատակն էր ծանոթանալ ծրագրի մասնակից ԵՄ երկրներում միջազգայնացման փորձին և գործելակերպին, քննարկել ծրագրի հետագա գործառույթները:

2017թ.-ի նոյեմբերին երևանում կայացած կոորդինացիոն հանդիպման ժամանակ ներկայացվեցին ծրագրի շրջանակում կատարված աշխատանքները, քննարկվեցին հետագա քայլերը և միջազգայնացման ազգային հարթակի ստեղծման անհրաժեշտությունը: Այնուհետև Հայաստանի ամերիկյան համալսարանում կազմակերպվեց «Միջազգայնացումը ազգային մակարդակում» թեմայով ազգային բաց համաժողով, որին մասնակցում էին նաև ներկայացուցիչներ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններից:

2017թ.-ի ընթացքում ստեղծվեց «ԲՈՒՍԹ» ծրագրի ինտերնետային կայքը՝ <http://boost.aua.am>:

«Կեղծարարությունը միջազգային բարձրագույն կրթության մեջ»/“Fraud in International Higher Education”

Սույն ծրագիրը իրականացվել է Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդումը և կոռուպցիայի դեմ պայքարը» համատեղ ծրագրի շրջանակներում հատկացված դրամաշնորհի միջոցներով: Ծրագրի նպատակն էր հետազոտել Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտում կեղծարարության երևույթը և միևնույն ժամանակ ներկայացնելով երևույթի իրական մասշտաբները համաշխարհային առումով: Հետազոտության արդյունքում հրատարակվել է «Կեղծարարությունը միջազգային բարձրագույն կրթության մեջ» ձեռնարկը և կազմակերպվել է մեկօրյա միջազգային համաժողով:

Ձեռնարկում, որը նախատեսված է կրթության հիմնական շահառուների համար, ներկայացված է միջազգային իրավիճակը կապված կեղծարարության հետ, իսկ վիճակագրական տվյալները փաստում են այդ երևույթի իրական չափերի մասին: Բերված օրինակները ցույց են տալիս նաև այն վնասները, որ հասարակությունը կրում է տարբեր տեսակի կեղծարարությունների արդյունքում: Ձեռնարկում նաև ներկայացված է ՀՀ-ում միջազգային կրթություն տրամադրող բուհերի խնդիրները և դրանց ռիսկայնությունը հնարավոր կեղծարարությունների առումով:

Միջազգային համաժողովի նպատակն էր բարձրացնել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների իրազեկվածությունը բարձրագույն կրթական համակարգերում առկա կեղծարարության տարբեր դրսևորումների վերաբերյալ և զարգացնել նրանց ունակությունը՝ բացահայտելու և պայքարելու դրանց դեմ: Մասնավորապես, համաժողովում ներկայացվեց հավատարմագրում և դիպլոմ արտադրող հաստատությունների, կեղծ առցանց կրթության, կրկնօրինակող կայքերի, ինչպես նաև անհատների կողմից կատարվող կեղծարարությունների հետ կապված վերջին զարգացումները: Համաժողովին մասնակցում էին միջազգային փորձագետներ Իտալիայի, Շվեդիայի, Լատվիայի և Ռուսաստանի ազգային տեղեկատվական կենտրոններից, որոնք ներկայացրեցին իրենց ազգային փորձը: Ներկայացվեց նաև Գրոնինգենի հռչակագիրը, որը ուղղված է որակավորումների թվայնացմանը: Համաժողովին մասնակիցների թիվն էր՝ 83:

Ծրագրի հիմնական արդյունքները 2018թ.-ի փետրվար ամսին կենկայացվեն ԵվրախՍETINED պլատֆորմի տարեկան հանդիպման ժամանակ:

4. ԱՓՇԱՏԿ-ի մասնակցությունը միջազգային համաժողովներին

2017թ ին կենտրոնը շարունակել է մասնակցել միջազգային տարբեր հանդիպումների՝ ներկայացնելով կենտրոնի կողմից իրականացված հետազոտությունները և փորձառությունը: Կենտրոնի համար հատկապես կարևոր էր 2017թ ի հունիսի 25-27 ը Կոպենհագենում կայացած ENIC-NARIC ցանցի 24-րդ տարեկան համաժողովը, որին մասնակցել են ԱՓՇԱՏԿ-ի երեք աշխատակիցներ: Միջոցառումը տարին մեկ անգամ հավաքում է Լիսաբոնի ճանաչման

կոնվենցիային միացած երկրների ազգային տեղեկատվական և ճանաչման կենտրոնները՝ ամփոփելու ճանաչման ոլորտի վերջին զարգացումները և տարբեր կենտրոնների կողմից իրականացված ծրագրերը, ներկայացնելու նոր նախաձեռնությունները: Համաժողովի ընթացքում քննարկված հարցերից առավել ուշագրավ էին.

- ⬇ 4-րդ արդյունաբերական հեղափոխության մարտահրավերները՝ կապված կրթության, և դրա ճանաչման հետ,
- ⬇ փախստականների որակավորումների ճանաչումը,
- ⬇ CIMEA-ի կողմից կեղծ կրթական փաստաթղթերի վերաբերյալ ձեռնարկը, որը նախատեսված է գնահատման մասնագետների համար,
- ⬇ MERIC Միջերկրական տարածաշրջանի երկրների ազգային տեղեկատվական ցանցի ճանաչման մարտահրավերները,
- ⬇ դիպլոմ «արտադրող» հաստատությունների կողմից շնորհված որակավորումները և դրանց բացահայտելու քաղաքականությունը,
- ⬇ Բոլոնիայի գործընթացի և դրանից առաջ շնորհված որակավորումների ճանաչման հիմնական առանձնահատկությունները և մարտահրավերները և այլն:

4. Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ)/Բոլոնիայի գործընթաց

Հայաստանը շարունակում է մասնակցել ԵԲԿՏ-ի հետագա ձևավորման և ամրապնդման աշխատանքներին և հետևողականորեն իրականացնում է Բոլոնիայի գործընթացի բարեփոխումները ազգային մակարդակում՝ ներգրավելով բոլոր շահառուներին: Հիմնադրամը իր գործունեության առաջին օրվանից մասնակցել է գործընթացի գործադիր խմբի աշխատանքներին: 2012-2015թթ.-ին, երբ Հայաստանը հանդիսանում էր ԵԲԿՏ-ի փոխնախագահ երկիրը, կենտրոնում ձևավորվել է Բոլոնիայի քարտուղարությունը, որը համակարգել է եվրոպական բարեփոխումների ողջ գործընթացը:

ԱՓՇԱՏԿ-ը շարունակում է մասնակցել Բոլոնիայի գործընթացի կառավարման աշխատանքներին միջազգային հարթակում, մասնավորապես ԵԲԿՏ-ի գործադիր մարմնի (Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի) ու Բոլոնիայի քարտուղարության աշխատանքներին՝ ապահովելով Հայաստանի շարունակական մասնակցությունը և պահպանելով ուղղակի կապի, փոխշփման և քննարկման հարթակը ԵԲԿՏ-ի անդամ 48 երկրների բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարությունների հետ, ինչպես նաև ներգրավելով Բոլոնիայի գործընթացի համակարգման ու հիմնարար փաստաթղթերի մշակման աշխատանքներին:

2018թվ. համար կենտրոնին հատկացվել են լրացուցիչ միջոցներ Բոլոնիայի գործընթացի համար պահանջվող աշխատանքները իրականացնելու համար:

6. Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի կոմիտեի բյուրո

Հիմնադրամը, ի դեմս իր տնօրենի, շարունակել է ակտիվորեն մասնակցել Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի միջկառավարական կոմիտեի բյուրոյի աշխատանքներին: Հաշվետու տարվա ընթացքում բյուրոյի ուշադրության կենտրոնում են եղել հետևյալ հարցերը.

- ✚ Թուրքիայում ուսանողների բողոքները Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի դրույթների կոպիտ խախտումների վերաբերյալ,
- ✚ փախստականների որակավորումների ճանաչման վերաբերյալ հանձնարարականի և դրա բացատրական հուշագրի մշակումը,
- ✚ ENIC-NARIC կենտրոնների վեբ կայքերի և ազգային կրթական համակարգերի նկարագրության նվազագույն պահանջները:

Վերջին երկու հարցերի վերաբերյալ բյուրոն մշակել է նոր իրավական փաստաթղթեր, որոնք քննարկվել են անդամ երկրների կողմից և արժանացել հավանության:

Նոյեմբերի 14-ին Ստրասբուրգում տեղի ունեցավ արտահերթ միջակառավարական կոմիտեի նիստը նվիրված փախստականների որակավորումների ճանաչման հարցերին: Նիստի ժամանակ հանդես եկան Եվրախորհրդի և Յունեսկոյի ներկայացուցիչները՝ նշելով որակավորումների ճանաչման հարցերի կարևորությունը և անդրադառնալով ճանաչման գլոբալ կոնվենցիայի մշակման ընթացքին: Գլոբալ կոնվենցիան հատկապես կարևոր է կրթության միջազգայնացման և շարժունության համաշխարհային միտումների համատեքստում: Այնուհետև ներկայացվեց փախստականների վերաբերյալ նոր իրավական փաստաթուղթը, որը ընդունվեց միաձայն: Նշվեց նաև, որ 2018թվ.-ն բյուրոն կիրականցնի մոնիտորինգ՝ անդամ երկրներում Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի փախստականների վերաբերյալ հողվածի կիրառման:

7. Նոր նախաձեռնություններ

2017թ.-ին ԱՓՇԱՏԿ-ը շարունակել է աշխատել նոր ծրագրերի վրա և մասնակցել է հետևյալ նախագծերի մշակմանը:

Փախստականների Եվրոպական որակավորումների անձնագիր (ԵՈԱՓ)

2017թ.-ին Եվրոպայի խորհուրդը իրականացրել է ԵՈԱՓ ի պիլոտային ծրագիրը, որի արդյունքները ներկայացվեցին Ստրասբուրգում, նոյեմբեր ամսին: Մանրամասն ներկայացվեց ծրագրի մեթոդաբանությունը, թեկնածուների ընտրության մեխանիզմները և բուն գնահատման գործընթացը: Նշվեց, որ 2017թվ. ին մեծ հաջողությամբ Հունաստանում իրականացվել են երեք գնահատման սեսիաններ, որոնց մասնակցել են թվով 100 փախստականներ և դրանցից միայն 92-ը անցել են հարցազրույցը: Գնահատման արդյունքում միայն 78 փախստականներ են կարողացել փաստել իրենց կրթությունը, մնացածները չեն կարողացել բավարար տեղեկատվություն ներկայացնել գնահատման մասնագետներին:

Հայաստանը, Սլովենիան և Գերմանիան որպես դիտորդներ մասնակցել են Հունաստանում տեղի ունեցած գնահատման սեսիաններին:

Այնուհետև Եվրախորհրդի ներկայացուցիչները ներկայացրեցին հաջորդ երեք տարվա

համար մշակված ծրագիրը, որը հավանություն ստացավ մասնակիցների կողմից: Հայաստան, Սլովենիան և Գերմանիան ընդգրկվեցին ծրագրի մեջ: Առաջարկվեց, որ ծրագրի թիմը ուսումնասիրի նաև գործընթացի թվայնացման հնարավոր լուծումները:

Նորվեգական-հայկական համգործակցություն բուհական ընդունելության և ճանաչման գործընթացներում/ NACAR - Norwegian-Armenian Cooperation in Admission and Recognition, Eurasia

Ծրագրի նախագիծը մշակվել է ԱՓՇԱՏԿ ի և NOKUT-ի կողմից, որին կմասնակցեն նաև մեկ նորվեգական և երկու հայկական բուհեր: Ծրագրի նպատակն է խթանել երկու երկրների բուհերի համագործակցությունը և նպաստել կրթական համակարգի միջազգայնացմանը:

Լատվիայի ազգային տեղեկատվական կենտրոնի հետ համատեղ մշակվել է ևս մեկ ծրագիր որակավորումների ազգային շրջանակների դերը ճանաչման համար:

8. Ֆինանսական հակիրճ տեղեկատվություն

2017թ. ի ընթացքում հիմնադրամի կողմից իրականացված ֆինանսական գործառույթները.

ՀՀ պետական բյուջեի կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվել է 42 259.5 հազար դրամի ֆինանսական աջակցություն՝ դրամարկղային ծախսը կազմել է 41 682.8 հազար դրամ: Ինչպես նաև հիմնադրամը նախորդ ժամանակաշրջաններից ունեցել է տնտեսումներ Բոլոնիայի քարտուղարության ծրագրից՝ 2 392.4 հազար դրամ և այլ դրամաշնորհներից՝ 168.7 հազար դրամ, որոնցից ծախսվել են համապատասխանաբար 1 440.2 հազար դրամը և 134.9 հազար դրամը՝ հիմնադրամի բնականոն գործունեության ապահովման համար:

Վճարովի ծառայությունների գծով մուտքերը 2017թ ին կազմել են 1 895.0 հազար դրամ: Վճարովի ծառայությունների միջոցներից կատարվել են 2 031 .5 հազար դրամի ծախսեր (հարկերի գծով ծախսեր, վեբ կայքի պատրաստման համար ծախս և այլն):

Ավանդադրված միջոցներից ստացվել են 506 .3 հազար դրամի տոկոսային եկամուտներ:

2017թ ին հիմնադրամը իրականացրել է մի շարք դրամաշնորհային ծրագրեր.

- «Ազգային և ակադեմիական դիպլոմների նմուշներ և պատճեններ» SCAN-D2 դրամաշնորհային ծրագիր: Ծրագրի շրջանակում հիմնադրամին 2016թ ին փոխանցվել է 583.5 եվրո, իսկ 2017թ-ին՝ 2 385.0 եվրո: 2017թ ի ընթացքում 2 968.5 եվրոյի փոխարկումներից հետո մուտքը կազմել է 1 596.8 հազարին համարժեք դրամ, իսկ ծախսը՝ 1 030.6 հազար դրամ:

- ✦ «Կեղծարարության դեմ պայքարը միջազգային բարձրագույն կրթությունում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում մուտքը կազմել է 4 598.2 հազար դրամ: Գումարը ծախսվել է ամբողջությամբ:
- ✦ «Փախստականները և ճանաչումը. Գործիքակազմ փախստականների և տեղահանված անձանց բարձրագույն կրթության ճանաչման համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակում հիմնադրամը ստացել է 9 944.0 եվրո: 9 944.0 եվրոյի փոխարկումներից հետո մուտքը կազմել է 5 349.3 հազարին համարժեք դրամ, իսկ ծախսը՝ 5 938.9 հազար դրամ: Ավելի ծախսված գումարը ենթակա է փոխհատուցման:
- ✦ «ԲՈՒՍԹ-հայկական համալսարանների միջազգայնացման ուղղվածություն և մարքեթինգի խթանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում մուտքը կազմել է 1 529.8 հազար դրամ: Գումարը ծախսվել է ամբողջությամբ:

Համաձայն Հիմնադրամի մասին ՀՀ օրենքի՝ կենտրոնում պետք է իրականացվի առողջօրրակյան ստուգում: Առաջարկվում է 2017թ. գործունեության առողջօրի իրականացման համար հաստատել «Երևան-Առողիտ կոնսալտ» ՓԲԸ ի թեկնածությունը: